

13-02/40
17.10.2011թ.

**ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ԶԱՎԱԴՅԱՆԻՆ**

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ԶԱՎԱԴՅԱՆ

Գործող օրենսդրության պահանջների համաձայն ներկայացնում ենք
Հաշվետու թողարկողի 2011թ. երրորդ եռամսյակի հաշվետվությունը:
Առդիր 14 էջ:

Հարգանքով՝

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ

ԱՐՄԵՆ ՆԱԼԶՅԱՆ

ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ,
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ

Հայաստանի Հանրապետություն, 0002, ք. Երևան, Ամիրյան 23/1:

Հեռ.՝ (374 10) 532007, 538904, 8686

Ֆաքս՝(374 10) 538904

E-mail: bank@aeb.am

Եռամսյակային հաշվետվություն թիվ 3 2011թ., 17 հոկտեմբերի 2011թ.




տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ սովորական բաժնետոմս (բաժնային արժեթուղթ)

արժեթղթերի քանակը՝ 933335

արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ 2500 ՀՀ դրամ

«Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկուցում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են»:

ստորագրող անձինք՝

Ռուբեն Բաղայան (անուն, ազգանուն)	Գործադիր տնօրենի տեղակալ (պաշտոն)	 (ստորագրություն)	17.10.2011թ. (ամսաթիվ)
Արմեն Տեր-Հակոբյան (անուն, ազգանուն)	Գործադիր տնօրենի տեղակալ (պաշտոն)	 (ստորագրություն)	17.10.2011թ. (ամսաթիվ)
Դավիթ Ազատյան (անուն, ազգանուն)	Գլխավոր հաշվապահ (պաշտոն)	 (ստորագրություն)	17.10.2011թ. (ամսաթիվ)
Հայկ Ավետիսյան (անուն, ազգանուն)	Ռազմավարության և ռիսկերի կառավարման վարչության պետ (պաշտոն)	 (ստորագրություն)	17.10.2011թ. (ամսաթիվ)
Արտակ Առաքելյան (անուն, ազգանուն)	Տարածքային կառավարման վարչության պետ (պաշտոն)	 (ստորագրություն)	17.10.2011թ. (ամսաթիվ)
Սմբատ Թադևոսյան (անուն, ազգանուն)	Իրավաբանական վարչության պետ (պաշտոն)	 (ստորագրություն)	17.10.2011թ. (ամսաթիվ)
Ռուբեն Հայրապետյան (անուն, ազգանուն)	Վարկավորման և միջոցների ներգրավման վարչության պետ (պաշտոն)	 (ստորագրություն)	17.10.2011թ. (ամսաթիվ)
Արմեն Նալջյան (անուն, ազգանուն)	Գործադիր տնօրեն (պաշտոն)	 (ստորագրություն)	17.10.2011թ. (ամսաթիվ)



Ենթահավելված 7

Հաստատված 1 Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի հունիսի 8-ի թիվ 127-Ն որոշմամբ

Հավելված 7

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հուլիսի 10-ի թիվ 205 Ն որոշմամբ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (ձև թիվ 7)

Ֆինանսական վիճակի մասին

«ՀՀ Կենտրոնական բանկի 2011 թ.

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ թ.Նրևան, Ամիրյան փող 23/1

	ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթ.	Ընթացիկ միջանկյալ ժամանակա-շրջանի վերջի դրությամբ (յուսուզված)	Նախորդող ֆինանսական տարվա վերջի դրությամբ (ստուգված)
1	Ակտիվներ			
1	Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	13	9,299,203	10,417,760
1.2	Թանկարժեք մետաղների բանկային տուսեղանային ձուլակտորներ		443	443
1.3	Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	14	8,349,643	4,731,722
1.4	Առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվներ	15	6,569	6,694
1.5	Հաճախորդներից ստացված վարկեր և այլ վիճակագրություններ	16	29,437,649	27,868,643
1.6	Վաճառքի համար մտադեբի ֆինանսական ակտիվներ	17	2,128,399	1,913,700
1.6.1	Հետգնման պայմանագրերով գրավարկված արժեթղթեր	17	317,377	1,765,167
1.8	Ներդրումներ վերահսկվող անձանց կանոնադրական կապիտալում	19	324,000	254,000
1.9	Վաճառքի համար պահվող այլ ընթացիկ ակտիվներ		152,039	68,871
1.10	Հիմնական միջոցներ	20	3,133,706	2,740,294
1.10.1	Ոչ նյութական ակտիվներ	20	112,163	107,522
1.11	Հետաձգված հարկային ակտիվներ	11	14,336	
1.12	Այլ ակտիվներ	21	1,011,765	828,934
	Ընդամենը՝ ակտիվներ		54,287,292	50,703,750
2	Պարտավորություններ			
2	Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	22	13,336,797	14,737,101
2.2	Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	23	31,233,140	25,366,791
2.3	Ընթացիկ հարկի գծով պարտավորություն		134,258	
2.5	Առևտրային նպատակներով պահվող պարտավորություն	25		1,296,560
2.6	Վճարվելիք գումարներ	26	47,978	33,776
2.7	Հետաձգված հարկային պարտավորություններ	11		9,645
2.9	Այլ պարտավորություններ	27	393,767	347,778
	Ընդամենը՝ պարտավորություններ		45,145,937	41,791,651
3	Կապիտալ			
3	Կանոնադրական կապիտալ	28	2,333,338	2,333,338
3.3.1	Գլխավոր պահուստ		5,405,133	5,405,133
3.3.2	Վերազնահատման պահուստներ		64,401	59,664
3.4	Զբաղիված շահույթ (վնաս)		1,338,483	1,113,964
	Ընդամենը՝ կապիտալ		9,141,355	8,912,099
	Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ		54,287,292	50,703,750

Բանկի վարչության նախագահ (Կործակիր տեղում)  Ա.Նալչյան

Գլխավոր հաշվապահ  Գ. Ակսայան

Հաշվապետության վավերացման ամսաթիվը 14 հունիսի 2011 թ.



ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
 համապարփակ ֆինանսական արդյունքների մասին (ձև թիվ 6)

«30» սեպտեմբերի 2011թ.
 «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ք.Երևան, Ամիրյան փող.23/1

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրություններ	01.07.2011-30.09.2011 (չստուգված)	01.01.2011-30.09.2011 (չստուգված)	01.07.2010-30.09.2010 (չստուգված)	01.01.2010-30.09.2010 (չստուգված)
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	3	1,400,067	4,090,769	1,203,723	3,641,633
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	3	(602,812)	(1,738,783)	(507,974)	(1,466,931)
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ		797,255	2,351,986	695,749	2,174,702
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	4	346,326	886,728	297,378	840,211
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	4	(61,349)	(184,870)	(107,859)	(235,303)
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ		284,977	701,858	189,519	604,908
Եկամուտ շահարաժիհներից		0	0	0	13,546
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	5	209,556	517,642	155,183	381,621
Այլ գործառնական եկամուտներ	6	49,447	190,396	59,006	155,654
Գործառնական եկամուտներ		1,341,235	3,761,882	1,099,457	3,330,431
Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին	7	73,547	238,368	(53,121)	(633,387)
Ընդհանուր վարչական ծախսեր	8	(824,721)	(2,484,322)	(693,351)	(2,092,768)
Այլ գործառնական ծախսեր	9	(320,505)	(921,805)	(250,562)	(708,131)
Շահույթը (վնասը) մինչև հարկումը		269,556	594,123	102,423	(103,855)
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	11	(67,646)	(159,604)	(30,695)	12,651
Շահույթը (վնասը) հարկումից հետո		201,910	434,519	71,728	(91,204)
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	12	0.22	0.47	0.08	(0.10)
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ վերագնահատումներ		(31,135)	5,921	(5,943)	(2,031)
Այլ համապարփակ եկամուտի գծով շահութահարկ		6,227	(1,184)	1,189	407
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		(24,908)	4,737	(4,754)	(1,624)
Համապարփակ ֆինանսական արդյունք		177,002	439,256	66,974	(92,828)

Բանկի վարչության նախագահ (Գործադիր տնօրեն)

Գլխավոր հաշվապահ

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14 հոկտեմբերի 2011 թ

ԿՏ



Ա.Նալբյան

Գ. Ազատյան

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Գրամսկան միջոցների հոսքերի վերաբերյալ

«30» սեպտեմբերի 2011 թ.
«ՀԱՅԿԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից ԲԲԸ թ.Նրբում, Անիկյան փող 23/1

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ուսումը	Հաշվետու ժամանակաշրջան (շտապում)	Նախորդ ժամանակաշրջան (շտապում)
1. Գրամսկան հոսքեր գործառնական գործունեությունից		x	x
<i>Գրամսկան միջոցների գրաս հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունները</i>			
Մուտքավորում ակտիվներ		4,098,185	3,620,254
Վերադարձված ակտիվներ		(1,774,887)	(1,526,128)
Մուտքավորում կոմպիոն գումարներ		886,728	841,221
Վերադարձված կոմպիոն գումարներ		(184,870)	(235,303)
Առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներից օգուտ(վնաս)		31,244	17,245
Արտարժույթի սուբ ա Վանադի գործունեություններից օգուտ(վնաս)		507,511	385,989
Նախադրյալից ցածր և դրան հավասարեցված այլ վնասումներ		197,854	231,069
Վերադարձված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վնասումներ		(1,434,187)	(1,218,799)
Գործառնական գործունեությունից ստացված այլ եկամուտներ և վնասումներ այլ ծախսեր		(1,279,473)	(1,196,173)
Գրամսկան հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից		1,051,105	1,009,406
2. Գործառնական ակտիվներում նվազում/ (ավելացում)		(3,826,910)	582,859
այդ թվում՝			
պրոտանդ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ		(2,313,712)	(851,334)
հանրապետական այլոց ժողովրդի և օտարապետական		(1,283,026)	2,230,557
առևտրային նպատակով պահվող և վանադի համար մուսուլի առևտրային նվազում (ավելացում)		(21,706)	(661,860)
այլ օտարապետական ակտիվներում նվազում/ (ավելացում)		(208,466)	(134,504)
3. Գործառնական պարտավորությունների ավելացում (նվազում)		5,187,241	752,117
այդ թվում՝ պարտավորություն ֆինանսական կազմակերպություն նկատմամբ(նվազում)		(951,106)	(3,374,161)
պարտավորություն հանրապետական կազմակերպություն նկատմամբ(նվազում)		6,181,087	4,142,469
այլ գործառնական պարտավորությունների նվազում (ավելացում)		(42,740)	(16,191)
Ցուտ գրամսկան հոսքեր գործառնական գործունեությունից մինչև և շահութահարկի վճարումը		2,411,436	2,344,382
Վճարված շահութահարկ		(37,251)	(26,908)
Ցուտ գրամսկան հոսքեր գործառնական գործունեությունից		2,374,185	2,317,474
2. Գրամսկան հոսքեր ներդրումային գործունեությունից		x	x
մինչև մուտքում ժամկետային պահվող ներդրումային նվազում (ավելացում)			
Այլ տնտեսական կազմակերպություն կապիտալի ներդրումների նվազում (ավելացում)		(106,429)	(101,486)
Հրեմական միջոցներում և ոչ կապիտալ ակտիվներում կապիտալ ներդրումների նվազում (ավելացում)		(138,019)	(9,430)
Մուտքավորում շահութահարկ			13,546
Հրեմական միջոցների և ոչ կապիտալ ակտիվների ձեռքբերում		(655,419)	(642,175)
Հրեմական միջոցների և ոչ կապիտալ ակտիվների օտարում		4,334	43,149
Գրամսկան միջոցների գրաս հոսքեր այլ ներդրումային գործունեությունից		(895,533)	(696,399)
Ցուտ գրամսկան հոսքեր ներդրումային գործունեությունից		(895,533)	(696,399)
3. Գրամսկան հոսքեր ֆինանսական գործունեությունից		x	x
Վճարված շահութահարկներ		(212,682)	(156,914)
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)		(51,925)	(723,314)
Բանկերից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)		(1,842,270)	(116,060)
Մուտքավորում այլ փոխառությունների ավելացում (նվազում)		418,121	3,011,929
Ցուտ գրամսկան հոսքեր ֆինանսական գործունեությունից		(1,688,756)	2,035,706
Արտարժույթի փոխարժեքի փոփոխություն արվեստների գրամսկան միջոցների և դրանց համարժեքների վրա		112,555	(384,157)
Գրամսկան միջոցների և դրանց համարժեքների գրաս ավելացում(նվազում)		(97,549)	3,272,624
Գրամսկան միջոցների և դրանց համարժեքներից օտարապետական ակտիվներ	13 2	10,684,841	13,165,381
Գրամսկան միջոցների և դրանց համարժեքներից օտարապետական վերջում	13 2	10,587,292	16,638,000

Բանկի վարչության նախագահ (Գործադիր տնօրեն)  Վ. Նարյան
Գլխավոր հաշվապահ  Գ. Վագանյան
Հաշվառության վավերացման ամսաթիվը՝ 14 հոկտեմբեր 2011 թ.



ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին (ձև թիվ 8)
«30» սեպտեմբերի 2011թ
«ՅԱՅԿԱՆՈՒՄԱՆ» ԲԸԸ ք.Երևան, Ամիրյան փող 23/1

Սեփական կապիտալի առաքելի անվանումը	Կանոնադրական կապիտալ				Պայմանական պահուստ	Մասնավորապես՝ 1. Կապիտալի պահուստ 2. Կապիտալի պահուստի հիման վրա 3. Կապիտալի պահուստի հիման վրա	Պայմանական պահուստի հիման վրա 4. Կապիտալի պահուստի հիման վրա	Պայմանական պահուստի հիման վրա 5. Կապիտալի պահուստի հիման վրա	Պայմանական պահուստի հիման վրա 6. Կապիտալի պահուստի հիման վրա	Պայմանական պահուստի հիման վրա 7. Կապիտալի պահուստի հիման վրա	Պայմանական պահուստի հիման վրա 8. Կապիտալի պահուստի հիման վրա	Պայմանական պահուստի հիման վրա 9. Կապիտալի պահուստի հիման վրա	Պայմանական պահուստի հիման վրա 10. Կապիտալի պահուստի հիման վրա	Պայմանական պահուստի հիման վրա 11. Կապիտալի պահուստի հիման վրա	Պայմանական պահուստի հիման վրա 12. Կապիտալի պահուստի հիման վրա	Պայմանական պահուստի հիման վրա 13. Կապիտալի պահուստի հիման վրա	Պայմանական պահուստի հիման վրա 14. Կապիտալի պահուստի հիման վրա	
	1	2	3	4														
Հարկանք	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14				
Կանոնադրական պահուստի ֆինանսական տարբերակներ (տարբերակներ) (I ստորախումբ)																		
1. Մնացորդ հայտը ֆինանսական տարբերակի վրա առ 01 հունվարի 2010թ. (տասնգում)	2,333,338	-	2,333,338	-	405,133	-	35,507	-	-	5,925,326	-	8,699,304	-	8,699,304				
1.1. Հաշվառության հաշվառման արտադրանքի փոփոխությունների ընդհանուր արժեքը և Կանոնադրական ֆինանսական տարբերակի մնացորդ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-				
2. Արտադրանքի մնացորդ	2,333,338	-	2,333,338	-	405,133	-	35,507	-	-	5,925,326	-	8,699,304	-	8,699,304				
4. Համադրման կետում	-	-	-	-	-	-	(1,624)	-	-	(91,204)	-	(92,828)	-	(92,828)				
5. Հանդիմանումներ	-	-	-	-	-	-	-	-	-	(163,334)	-	(163,334)	-	(163,334)				
6. Ներքին շաքիռ, այլ թմուր	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-				
6.1. Մտնումները գլխավոր պահուստի	-	-	-	-	5,000,000	-	-	-	-	(5,000,000)	-	-	-	-				
8. Մնացորդ հայտը ֆինանսական տարբերակի վրա 30.09.10թ. (տասնգում)	2,333,338	-	-	-	5,405,133	-	33,883	-	-	670,788	-	8,443,142	-	8,443,142				
Շրջանի արտաքին ֆինանսական տարբերակներ (տարբերակներ) (II ստորախումբ)																		
9. Մնացորդ հայտը ֆինանսական տարբերակի վրա առ 01 հունվարի 2011թ. (տասնգում)	2,333,338	-	2,333,338	-	5,405,133	-	59,664	-	-	1,113,964	-	8,912,099	-	8,912,099				
9.1. Հաշվառության հաշվառման արտադրանքի փոփոխությունների ընդհանուր արժեքը և Կանոնադրական ֆինանսական տարբերակի մնացորդ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-				
10. Անտեսնաբերական մնացորդ	2,333,338	-	2,333,338	-	5,405,133	-	59,664	-	-	1,113,964	-	8,912,099	-	8,912,099				
11. Բաժնետերեր (ներդրումներ) և/կամ գործարքներ բանկային հիմնադրամների վրա, այլ թմուր	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-				
11.1. Ներդրման ֆինանսական կապիտալի և ներդրման կետում	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-				
11.2. Կանոնադրական կապիտալի վրա, այլ թմուր և/կամ և շրջանառության համար բանկային հիմնադրամների վրա	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-				
12. Կանոնադրական կետում	-	-	-	-	-	-	4,237	-	-	434,519	-	439,256	-	439,256				
13. Հանդիմանումներ	-	-	-	-	-	-	-	-	-	(210,000)	-	(210,000)	-	(210,000)				
14. Սեփական կապիտալի առաքելի այլ տարբերակներ (մնացորդ) այլ թմուր	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-				
14.1. Երկրի սեփական կապիտալի վրա գործարքներ անտեսնաբերական կետում	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-				
15. Ներքին շաքիռ, այլ թմուր	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-				
15.1. Մտնումները գլխավոր պահուստի	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-				
15.2. Գլխավոր պահուստի հաշվի կառավարման վրա մտնումներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-				
15.3. Լիզինգի մնացորդներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-				
15.4. Հիմնադրամների և Գործարքների ֆինանսական տարբերակի վրա թմուր և/կամ և/կամ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-				
15.5. Մնացորդ կապիտալի այլ տարբերակներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-				
16. Մնացորդ հայտը կապիտալի մնացորդների վրա 30.09.10թ. (տասնգում)	2,333,338	-	2,333,338	-	5,405,133	-	64,401	-	-	1,338,483	-	9,141,355	-	9,141,355				

Սեփական կապիտալի առաքելի (հարկերի տեսքով) ղեկավարող
Սեփական կապիտալի
Հայաստանի կենտրոնական բանկի 14 հունվարի 2011թ.

Ս. Երևան
Ս. Երևան



Գնահատելով «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ հաշվետու եռամսյակի գործունեությունը՝ պետք է նշենք, որ հաշվետու եռամսյակում բանկը ապահովել է ինչպես գործունեության հիմնական ցուցանիշների ծավալների որոշակի աճ, այնպես էլ կարևոր որակական տեղաշարժեր:

Կարևորվում է բանկի՝ որպես ունիվերսալ կառույցի զարգացման ռազմավարության շարունակականությունը, որը կպահպանվի նաև ապագայում:

Հաշվետու եռամսյակում բանկը անդամակցեց «VISA» միջազգային վճարային համակարգին և սկսեց թողարկել «VISA» միջազգային քարտեր, ներդրեց «Էսքրոու» և «առարկայագուրկ մետաղական» հաշիվների բացման ու սպասարկման ծառայությունը:

Հաշվետու եռամսյակը արդյունավետ էր նաև միջազգային ֆինանսավարկային կառույցների հետ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ համագործակցության առումով. ընդլայնվեցին գործող ծրագրերը և ծավալվեց գործակցություն նոր բանկային ծառայությունների ոլորտում:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ հաստատուն քայլերով շարունակելու է իր առաջընթացը նոր վարկային ծրագրերի ներդրման ու զարգացման և միջոցների ներգրավման նոր շուկաների յուրացման ոլորտներում:

Հանդիսանալով ունիվերսալ բանկ՝ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ գործունեություն է ծավալում բանկային ծառայությունների մատուցման բոլոր ոլորտներում: Բանկը իր կայուն դիրքերն ունի թե արտարժույթային, թե արժեթղթերի, թե միջբանկային շուկաներում: Որպես ունիվերսալ կառույց, բանկը ակտիվ գործունեություն է ծավալում թե վարկավորման, թե ծառայությունների մատուցման, թե փոխանցումների նոր ձևերի, թե պլաստիկ քարտերի սպասարկման ոլորտներում:

Բանկի առջև դրված հեռանկարային և կարճաժամկետ (ընթացիկ) նպատակների իրականացմանն ուղղված միջոցառումների արդյունավետությունը պայմանավորված է ռիսկերի կառավարման օպտիմալ համակարգի առկայությամբ, որն ուղղված է ռիսկերի ընդունելի մակարդակի և ռիսկ-եկամուտ օպտիմալ հարաբերակցության պայմաններում Բանկի գործունեության շարունակականության ապահովմանը:

Ռիսկերի կառավարումը ենթադրում է Բանկի գործունեության ընթացքում հնարավոր ռիսկերի բացահայտման, նույնականացման, գնահատման և գնահատված ռիսկերին արձագանքման փուլերի իրականացում: Ընդ որում ռիսկերին արձագանքման փուլն իրականացվում է ռիսկից խուսափման, ռիսկի նվազեցման, ռիսկի ընդունման կամ ռիսկի փոխանցման տարբերակներով: Ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման հարցերը մշտապես գտնվում են Բանկի ղեկավարության ուշադրության կենտրոնում՝ որպես կարևորագույն նշանակություն ունեցող հարցեր, որոնք Բանկի հեռանկարային զարգացման առաջանցիկ տեմպերի ապահովման առումով իրենց ուրույն տեղն ունեն Բանկում իրականացվող ծրագրերի և միջոցառումների շարքում:

Բանկի գործունեության ռիսկայնության համակարգային գնահատումն իրականացվում է տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների, առանձին բիզնես-ուղղությունների և ռիսկատեսակների գծով տվյալների հավաքագրման և վերլուծության հիման վրա:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ լայնորեն կիրառում է առկա գիտա-գործնական արդյունավետ փորձը ակտիվների և պասիվների կառավարման գործընթացում՝ մշակված մեխանիզմների ներդրման և շարունակական կատարելագործման միջոցով, որը բանկին հնարավորություն է տալիս նվազեցնել ռիսկայնությունը՝ բարձրացնելով կառավարման արդյունավետությունը:

Վարվող ճկուն տոկոսադրույքային քաղաքականությունը հնարավորություն է ընձեռում բարձրացնել անհրաժեշտ ռեսուրսային բազայի ապահովման գործընթացի արդյունավետությունը և նվազեցնել ռիսկայնությունը՝ հաշվի առնելով ներգրավվող միջոցների դիվերսիֆիկացիան:

Տնտեսամաթեմատիկական մոդելավորման, գործընթացների կանոնակարգման, վերլուծության, կանխատեսման և ներքին հսկողության համակարգի կատարելագործման գործիքների հիման վրա՝ Բանկը հնարավորություն է ստանում ռիսկերի կառավարման համակարգի միջոցով ապահովել ռիսկ-եկամուտ օպտիմալ հարաբերակցությունը՝ Բանկի զարգացման կշռադատված ռազմավարության պայմաններում բացառելով կամ նվազագույնի հասցնելով Բանկի գործունեության ընթացքում հնարավոր ռիսկերով պայմանավորված կորուստները և ապահովելով գործող նորմատիվային դաշտի պահանջները, շահութաբերության, հուսալիության, անվտանգության և վճարունակության գործակիցների ընդունելի մակարդակները:

Ռիսկերի կառավարման հիմնական սկզբունքները, առանձին ռիսկատեսակների գնահատման և կառավարման մոտեցումները, մեթոդաբանությունները և մոդելները սահմանված են բանկի ներքին իրավական ակտերում՝ զուգակցելով դրանք բանկի համախառն ռիսկի գնահատման և դրա օպտիմալ կառավարման միջոցառումների սահմանմամբ: Բանկի ռիսկերի կառավարման համակարգը ներքին և արտաքին միջավայրերում տեղի ունեցող փոփոխություններին, բանկի ռազմավարական խնդիրներին և իրականացվող գործառնությունների ծավալային և որակական բնութագրերին համապատասխանեցնելու նպատակով ռիսկերի կառավարման ոլորտը կանոնակարգող ներքին իրավական ակտերը, բանկի գործունեությունը կանոնակարգող մյուս ներքին փաստաթղթերին զուգընթաց, պարբերաբար վերանայվում են: Բանկի ռիսկերի կառավարման ստորաբաժանման կողմից մշտապես աշխատանքներ են իրականացվում ռիսկերի գնահատման և կառավարման մեթոդաբանության և գործընթացների համակողմանի, բազմամակարդակ վերլուծության և կատարելագործման ուղղությամբ:

Բանկի համախառն ռիսկի գնահատման և կառավարման համակարգի ներդրման և արդյունավետ գործունեության նպատակով մաթեմատիկական մոդելավորման աշխատանքները Բանկում շարունակվում են, որոնց արդյունքում մշակված տնտեսամաթեմատիկական մոդելը հնարավորություն է ընձեռում միկրո մակարդակի ռիսկերի գնահատման արդյունքների հիման վրա իրականացնելու Բանկի գործունեության ընդհանուր ռիսկայնության մակարդակի գնահատումը: Վերոնշյալ տնտեսամաթեմատիկական մոդելի շրջանակներում Բանկի համախառն ռիսկը կառավարվում է արտարժույթային, վարկային, իրացվելիության և տոկոսադրույքի փոփոխման ռիսկերի և դրանց գումարային՝ համախառն ռիսկի էական չափերի (մակարդակների) սահմանման և մոնիտորինգի միջոցով: Ռիսկերի էական մակարդակները վերանայվում են ըստ անհրաժեշտության՝ ելնելով Բանկի ռազմավարական նպատակներից, շուկայում առկա միտումներից և մրցակցության մակարդակից, ինչպես նաև միջավայրի այլ փոփոխություններից:

Համաձայն ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ռիսկերի կառավարման քաղաքականության» պահանջների, հաշվի առնելով GARP-ի (Generally Accepted Risk Principles) ռիսկի կառավարման սկզբունքները՝ բանկում մշակվել և ներդրվել են հետևյալ հիմնական ռիսկատեսակների գնահատման և կառավարման մոդելները.

- վարկային ռիսկ,

- տոկոսադրույքների փոփոխման ռիսկ,
- իրացվելիության ռիսկ,
- արտարժույթային ռիսկ,
- գնային ռիսկ,
- գործառնական ռիսկ:

Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը վարկի, հաշվարկված տոկոսի կամ դրանց մի մասի պայմանագրով սահմանված ժամկետներից ուշացման կամ անվերադարձելիության հնարավոր վտանգն է՝ պայմանավորված վարկառուի ֆինանսական վիճակի վատթարացմամբ, գրավի արժեզրկմամբ և նման այլ պատճառներով:

Բանկում ներդրված մեթոդաբանությունը հնարավորություն է տալիս գնահատել և օպտիմալ կառավարել վարկային ռիսկը որպես էկզոգեն փոփոխականներ ներառելով նաև էքսպերտային գնահատականները և նպաստելով վարկի տրամադրման հիմնավորված որոշումների կայացմանը: Բանկի վարկային պորտֆելի կառուցվածքի հնարավոր տարբեր փոփոխությունների ազդեցությունները Բանկի գործունեության ընթացիկ ցուցանիշների վրա վերլուծվում և գնահատվում է սթրես թեստավորման և տարբեր հավանական սցենարների դիտարկման միջոցով: Մշակված սթրես թեստերի տարբեր սցենարների միջոցով իրականացվում է վարկային ռիսկի գնահատում՝ հաշվարկելով որոշակի շուկային իրավիճակների ազդեցությունը բանկի ընդհանուր կապիտալի նվազագույն չափի և համարժեքության նորմատիվների վրա, գնահատվում են նորմատիվների խախտման հնարավորությունը և չափերը, պահուստաֆոնդ փոխանցման ենթակա հավելյալ գումարի չափը: Վարկային պորտֆելի ռիսկայնությունը գնահատվում է տարբեր հնարավոր սցենարների տեղի ունենալու հավանականությունների հաշվարկման և առավել հավանական սցենարների վերլուծության միջոցով, որի արդյունքների հիման վրա ձեռնարկվում են ռիսկայնության նվազագույն մակարդակի ապահովմանն ուղղված համապատասխան միջոցառումներ: Վերոնշյալ սթրեսային սցենարների վերլուծության շրջանակներում իրականացվում է նաև նորմատիվների խախտման կրիտիկական կետերի հաշվարկ և վերլուծություն, որը տեղեկատվություն է տալիս տվյալ օրվա դրությամբ նորմատիվների խախտման հավանականության՝ որպես վարկային ռիսկի յուրօրինակ գնահատականի վերաբերյալ: Ստանդարտ վարկերի դուրսգրման սցենարային մոդելում որպես էկզոգեն փոփոխականներ դիտարկվում են՝ «Հենտրոնական բանկի խորհրդի 09.02.2007թ. թիվ 39Ն որոշմամբ հաստատված՝ «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» Կանոնակարգ 2-ով սահմանված ռիսկի տարբեր կշռային խմբերին պատկանող վարկերի տեսակարար կշիռները դուրսգրված վարկերի ծավալում: Մոդելի կիրառման արդյունքում էնդոգեն փոփոխականների շարքում ստացվում են՝ նորմատիվների խախտման կրիտիկական կետերը, մոդելում ներառված յուրաքանչյուր նորմատիվի խախտման կրիտիկական կետին համապատասխան մյուս նորմատիվների ընթացիկ արժեքները և խախտման հավանականությունները, որոնք հնարավորություն են տալիս Բանկի կառավարման համապատասխան մարմիններին և հանձնաժողովներին նորմատիվների խախտման հավանականությունների վերաբերյալ ինֆորմացիան օգտագործել Բանկի ընթացիկ կառավարչական որոշումների կայացման գործընթացում:

Բանկում մշակվել է վարկային ռիսկի գնահատման մոդել, որի հիմքում ընկած է վարկային պորտֆելի դիվերսիֆիկացման աստիճանի գնահատումը՝ տարբեր չափանիշների վրա հիմնված կենտրոնացումների հաշվարկման միջոցով: Վարկային ռիսկի կենտրոնացումների մշակված մոդելը հնարավորություն է տալիս Բանկի ղեկավարությանը համապատասխան հաշվետվությունների միջոցով տեղեկատվություն ստանալու վարկային պորտֆելի՝ ըստ ֆիզիկական և իրավաբանական անձանց, ըստ մասնաճյուղերի, ըստ վարկերի խոշորության աստիճանի, ինչպես նաև ըստ արժույթների քանակային և ծավալային կենտրոնացումների վերաբերյալ՝ ապահովելով վարկերի տեղաբաշխման վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում պորտֆելի դիվերսիֆիկացման գործոնի ներառումը: Մոդելի կիրառմամբ հաշվարկվում են նաև ըստ մասնաճյուղերի՝ միջին վարկի ծավալները, վարկերի միջին կշռված տոկոսադրույքներն ըստ խոշորության խմբերի, վարկերի խոշորության աստիճանը բնութագրող ցուցանիշները, որոնք հնարավորություն են տալիս իրականացնել մասնաճյուղերի վարկային պորտֆելների համեմատական գնահատում՝ հաշվի առնելով նաև մասնաճյուղի տարածաշրջանում սոցիալ-տնտեսական իրավիճակը և մասնաճյուղի ռեսուրսային հնարավորությունները: Վարկային ռիսկի կառավարման արդյունավետ համակարգի շնորհիվ բանկի վարկային պորտֆելը շարունակում է պահպանել ավանդական բարձր որակը և ցածր ռիսկայնության աստիճանը:

Տոկոսադրույքների փոփոխման ռիսկ

Տոկոսադրույքի փոփոխման (տոկոսադրույքի) ռիսկը բանկի զուտ տոկոսային եկամտի կամ կապիտալի տնտեսական արժեքի վրա շուկայական տոկոսադրույքների փոփոխման բացասական ազդեցության հավանականությունն է:

Բանկում տոկոսադրույքների փոփոխման ռիսկը գնահատվում է «GAP մոդելի» և «Դյուրացիայի մոդելի» կիրառմամբ, որոնց հիմքում ընկած է տոկոսադրույքների փոփոխման նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների դիսբալանսի վերլուծությունը: Մոդելները հնարավորություն են տալիս իրականացնել ակտիվների և պարտավորությունների օպտիմալ կառավարում՝ հեջավորելով տոկոսադրույքի ռիսկը: Եռամսյակային և տարեկան կտրվածքով իրականացվում է տոկոսադրույքների փոփոխության՝ Բանկի զուտ տոկոսային եկամտի և կապիտալի վրա ազդեցության սցենարային վերլուծություն, որի արդյունքները ներառվում են Բանկի հրապարակվող միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում: Հաշվի առնելով ֆինանսական շուկայում տոկոսադրույքների փոփոխման ընդհանուր միտումները և կիրառելով մշակված մոդելները՝ ձեռնարկվում են միջոցառումներ ըստ ժամկետների ներգրավվող և տեղաբաշխվող միջոցների ծավալների արդյունավետ հարաբերակցությունների ապահովման ուղղությամբ:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը հավանականությունն է, որ բանկն ի վիճակի չի լինի ճիշտ ժամանակին բավարարել իր պարտատերերի պահանջներն առանց լրացուցիչ կորուստներ կրելու, ինչը բացասաբար կազդի բանկի շահույթի և/կամ կապիտալի վրա:

Բանկում իրացվելիության ռիսկի կառավարումն իրականացվում է ակտիվա-պասիվային գործառնությունների՝ ըստ ժամկետների և ծավալների տեղաբաշխվածության

կարգավորման և օրական դրամական հոսքերի համապատասխանեցման միջոցով՝ պահպանելով իրացվելիության և շահութաբերության օպտիմալ հարաբերակցությունը: Ժամկետայնության ճեղքվածքների հիմնադրույթի կիրառման հիման վրա Բանկում ներդրված իրացվելիության ցուցանիշների գնահատման և կառավարման մեթոդաբանությունը հնարավորություն է ընձեռում հաշվարկված ակնթարթային, մինչև 90 օր և մինչև 1 տարի կուտակային իրացվելիության ցուցանիշների ժամանակային շարքերի հիման վրա գնահատել ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ճեղքվածքների ազդեցությունը Բանկի իրացվելիության վրա, որը հիմք է հանդիսանում ակտիվների և պարտավորությունների կառավարման օպտիմալ որոշումների կայացման համար:

Սթրես թեստավորման սցենարային մոդելի ներդրումը հնարավորություն է տալիս գնահատել իրացվելիության նորմատիվների վրա շոկային տարբեր հնարավոր իրավիճակների ազդեցությունը՝ վերլուծելով ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների որոշակի բաժնեմասի պայմանագրի ժամկետից շուտ ետ պահանջման և ցպահանջ պարտավորությունների որոշակի բաժնեմասի ետ պահանջման դեպքում (ինչպես նաև նշված բաժնեմասերի տարբեր հնարավոր համակցությունների դեպքում) նորմատիվների փոփոխությունները և դրանց խախտման հավանականությունը: Նորմատիվների խախտման կրիտիկական կետերի հաշվարկումը հնարավորություն է տալիս ստանալ բանկի իրացվելիության ռիսկի այլընտրանքային գնահատականներ՝ վերլուծելով ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների պայմանագրի ժամկետից շուտ ետ պահանջման և ցպահանջ պարտավորությունների ետ պահանջման ազդեցությունը նորմատիվների վրա և վերջիններիս խախտման հավանականությունները:

Բանկի կողմից ներգրավված ցպահանջ և ժամկետային միջոցների կենտրոնացումների ռիսկի գնահատման տնտեսամաթեմատիկական մոդելը, քվանտիլային վերլուծության մեթոդների հիման վրա, հնարավորություն է տալիս գնահատել ֆիզիկական և իրավաբանական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդների կենտրոնացումների մակարդակները՝ կիրառելով մշակված կենտրոնացումների գործակիցները և հաճախորդների միջև ավանդների բաշխվածության վերլուծական գրաֆիկները: Մշակված մեթոդաբանության շրջանակներում իրականացվում է նաև սթրես թեստերի սցենարային վերլուծություն, որը ներառում է խոշորագույն 10% հաճախորդ ֆիզիկական և իրավաբանական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդների արտահոսքի ազդեցությունները նորմատիվների վրա, ինչպես նաև հաճախորդների վերոհիշյալ չորս խմբերից (ժամկետային ավանդ ներդրած ֆիզիկական և իրավաբանական անձինք, ցպահանջ ավանդ ներդրած ֆիզիկական և իրավաբանական անձինք) յուրաքանչյուրի 1%-ի ավանդների արտահոսքի գումարային ազդեցությունը տնտեսական նորմատիվների վրա:

Արտարժույթային ռիսկ

Արտարժույթային ռիսկը արտարժույթի փոխարժեքների տատանման արդյունքում Բանկի կորուստներ կրելու հավանականությունն է:

Բանկում արտարժույթային ռիսկի կառավարումն իրականացվում է ածանցյալ ֆինանսական գործիքների նկատմամբ հեջավորման այլընտրանքային տարբերակներով՝ կիրառելով միջազգային պրակտիկայում ընդունված VAR մեթոդաբանությունը, ինչպես նաև սթրես թեստերի սցենարային վերլուծության մեթոդները:

Արտարժութային ռիսկի կառավարման նպատակով կիրառվող VAR մեթոդաբանության հիմքի վրա մշակված արտարժույթների փոխարժեքների տատանումներից հնարավոր առավելագույն վնասների գնահատման տնտեսամաթեմատիկական մոդելը հնարավորություն է տալիս գնահատել Բանկի բաց դիրքերով պայմանավորված հնարավոր կորուստների ռիսկը: Մոդելի համար մուտքային տվյալներ են հանդիսանում փոխարժեքների վերջին 1 տարվա ժամանակային շարքի վարիացիայի ցուցանիշները և Բանկի արտարժութային ակտիվների և պարտավորությունների ծավալները: Մոդելի կիրառման արդյունքում ստացվում են ըստ առանձին արտարժույթների ռիսկերի և ընդհանուր արտարժութային ռիսկի (արտարժութային դիրքերի վերագնահատումից հնարավոր առավելագույն վնասի) գնահատականները, որոնք հիմք են հանդիսանում արտարժույթով ակտիվների և պարտավորությունների օպտիմալ կառավարման համար: Վերլուծության արդյունքում ստացված արտարժութային ռիսկի գծով կանխատեսված հնարավոր առավելագույն վնասը համադրվում է համապատասխան փաստացի օգուտ/վնասի մեծությունների հետ՝ կատարելով մոդելի որոշակիացման մակարդակի վերաբերյալ համապատասխան եզրահանգումներ: Արտարժույթի փոխարժեքների փոփոխության ազդեցությունը Բանկի շահույթի վրա գնահատվում է նաև եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ սթրես թեստերի սցենարային վերլուծության միջոցով, որի արդյունքները ներառվում են Բանկի հրապարակվող միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում: Բանկի արտարժութային քաղաքականությունը միտված է արտարժութային դիրքերի արդյունավետ կառավարման ապահովմանը՝ զուգակցելով այն արդարացված ռիսկի մակարդակի հետ:

Գնային ռիսկ

Գնային ռիսկը արժեթղթերի շուկայական գների անբարենպաստ փոփոխությունների հետևանքով բանկի ֆինանսական կորուստներ կրելու վտանգն է՝ պայմանավորված ինչպես տվյալ արժեթղթի և դրա թողարկողի, այնպես էլ շուկայում շրջանառվող արժեթղթերի շուկայական գների ընդհանուր տատանումների հետ կապված գործոններով (տվյալ արժեթղթի գծով երկար կամ կարճ դիրքի առկայության պայմաններում):

Գնային ռիսկի հնարավոր նվազագույն մակարդակն ապահովվում է հետևյալ միջոցառումների շրջանակներում.

- ֆինանսական շուկայի կառուցվածքային, ծավալային և գնային ցուցանիշների դինամիկայի, առանձին ֆինանսական գործիքների իրացվելիության վերլուծություն, առկա միտումների բացահայտում,
- հնարավոր կորուստների գնահատում,
- հեջավորման գործիքների կիրառում,
- ֆինանսական գործիքների գծով լիմիտների (ըստ արժեթղթերով գործառնության տեսակի, ըստ դիլերի, ըստ թողարկողի, stop-loss) սահմանում,
- արժեթղթերի փաթեթի բազմազանեցում (դիվերսիֆիկացիա)՝ ըստ թողարկողի, տնտեսության ճյուղերի, ժամկետայնության և այլն:

Գործառնական ռիսկ

Բանկային հիմնական և օժանդակ բիզնես-գործընթացների յուրաքանչյուր բաղադրիչ գործառնությունը պարունակում է որոշակի մակարդակի գործառնական ռիսկ, որը կարող է հանգեցնել ինչպես փոքր, այնպես էլ Բանկի համար էական չափերի հասնող կորուստների, որով էլ պայմանավորված է գործառնական ռիսկի արդյունավետ կառավարման կարևորությունը և առաջնային նշանակությունը բանկերի համար: Բանկի ռիսկերի կառավարման ոլորտը կանոնակարգող ներքին իրավական ակտերով գործառնական ռիսկը սահմանվում է որպես ուղղակի կամ անուղղակի կորուստների վտանգ՝ հնարավորություն (հավանականություն)՝ առաջացած կամ պայմանավորված բանկի անձնակազմի ոչ համարժեք (արհեստավարժության պակաս) կամ սխալ (պատահական, միտումնավոր) գործողություններով, բանկային գործընթացների կազմակերպման և կատարման թերություններով, խափանումներով (սարքավորումների տեխնիկական անսարքություն, ընթացակարգերի անկատարություն), ինչպես նաև անբարենպաստ արտաքին միջավայրի գործողություններով և իրավիճակներով (խարդախություն, տարերային աղետ):

Գործառնական ռիսկի վերահսկողության արդյունավետ համակարգի կիրառումն այդ ռիսկի օպտիմալ կառավարման կարևորագույն գործոններից է, որն ապահովվում է օրական հսկողության իրականացման, պարբերական և թեմատիկ ստուգումների միջոցով գործող կանոնակարգվածության մակարդակի պատշաճության գնահատման, կանոնակարգման կարիք ունեցող գործառնությունների վերհանման, հնարավոր ռիսկերի բացահայտման և պատասխանատու մարմիններին դրանց մասին տեղեկացման միջոցով:

Գործառնական ռիսկի կառավարման և գնահատման տեսանկյունից կարևորվում է բանկի ծախսային հոդվածների (տույժ, տուգանք) մշտական վերլուծությունը և դրանց վերաբերյալ վիճակագրության հավաքագրումը՝ տույժերի և տուգանքների գծով կատարված ծախսերի պատճառների վերհանման և ապագայում դրանց բացառման միջոցառումների ձեռնարկման նպատակով: Բազել II համաձայնագրի պահանջներին համապատասխան՝ գործառնական ռիսկի գծով կորուստների տվյալների բազայի հավաքագրման աշխատանքների շրջանակներում մշակվել և ներդրվել է կորուստների դեպքերի, դրանց չափերի, պատճառների և այլ ռեկվիզիտների վերաբերյալ Բանկի ստորաբաժանումների կողմից ներկայացվող հաշվետվությունների համակարգը, ինչպես նաև տվյալների բազայի կառուցվածքը, որում հավաքագրված տվյալներն օգտագործվում են կորուստների պատճառների և չափերի ամփոփ վերլուծությունների իրականացման համար՝ հետագայում դրանց հնարավորինս բացառմանը կամ նվազագույն մակարդակի ապահովմանն ուղղված միջոցառումների ձեռնարկման նպատակով:

Ավարտվել են Բանկի հիմնական բիզնես-գործընթացների նկարագրման սխեմատիկ մոդելների հիման վրա բիզնես-գործընթացների յուրաքանչյուր քայլի իրականացման հետ առնչվող հնարավոր ռիսկերի և բացասական իրադարձությունների բացահայտման, նույնականացման, գնահատման մոդելավորման և դրանց կանխարգելմանը և նվազեցմանն ուղղված միջոցառումների սահմանման աշխատանքները:

Գործառնական ռիսկի կառավարման շրջանակներում ենթադրվում է նաև կորուստների նվազեցմանն ուղղված ապահովագրական միջոցառումների ուսումնասիրում, գնահատում և ներդրում՝ հաշվի առնելով դրանց արդյունավետությունը:

Հաշվի առնելով բանկի կայուն զարգացման ռազմավարության շարունակականությունը, ապագա ծրագրավորվող գործունեությունը նպատակաուղղված է

լինելու բանկի դիրքի ամրապնդմանը և ընդլայնմանը ՀՀ բանկային շուկայում, միջազգային շուկաներ դուրս գալու հնարավորության ուսումնասիրմանը, որը հիմնականում նախատեսում է ակտիվների հետագա կայուն աճ /կանխատեսվում է նվազագույնը 20%-ի տարեկան աճ/, ինչպես ներգրավված ռեսուրսների /ավանդներ, միջազգային վարկային ծրագրեր/, այնպես էլ ձևավորած շահույթի և սեփական կապիտալի հաշվին:

Բանկի առաջիկա տարիների զարգացումը մեծապես պայմանավորված կլինի նոր ինստիտուցիոնալ բաժնետիրոջ հետ ծավալվող որակական նոր մակարդակի համագործակցությամբ: Կշարունակվի EBRD հետ վարկային ծրագրին զուգահեռ ակտիվորեն իրականացվող արտաքին առևտրի ակրեդիտիվային ֆինանսավորման ծրագիրը, ինչպես նաև հիփոթեքային ծրագիրը:

Բանկը նախատեսում է ընդլայնել իր համագործակցությունը նաև միջազգային ֆինանսական այլ կազմակերպությունների, հատկապես KfW, IFC, Սևծովյան Առևտրի և Զարգացման Բանկի ու Համաշխարհային Բանկի հետ՝ փոքր և միջին բիզնեսի վարկավորման հետ զուգահեռ առավել արագ կզարգանա հիփոթեքային վարկավորման համատեղ ծրագրերի իրականացումը, ինչպես նաև նոր ոլորտների վարկավորման ծրագրերը:

Առաջիկա ծրագրավորվող եկամուտների աճի հիմնական մասը նախատեսվում է ստանալ տոկոսային եկամուտներից, ավելացնելով մատուցվող ծառայություններից ձևավորվող եկամուտները: Վարկերից տոկոսային եկամուտների ավելացման ուղղությամբ կատարվում է նոր վարկային տեխնոլոգիաների ուսումնասիրում և ներդրում:

Մատուցվող ծառայություններից եկամուտների ավելացման համար իրականացվում է դրանց բազմազանում, պլաստիկ քարտերով ծառայությունների ցանկի ընդլայնում, կատարվում է անհատական պահատեղերի տրամադրում, նախատեսվում է ավելացնել բանկոմատների և սպասարկման կետերի ցանկը, զգալի արդյունքներ են ծրագրավորվում Europay վճարային համակարգի անդամությունից և միջազգային պլաստիկ քարտերի սպասարկումից, կոմունալ ծախսերի ընդունման ընդլայնումից:

Նշված խնդիրների իրականացման համար բանկը շարունակելու է տեխնիկայի պարբերական վերազինումը, ընթացակարգերի կատարելագործումը, նոր բանկային տեխնոլոգիաների ներդրումը:

Բանկը, հանդիսանալով ՀՀ բանկային համակարգի կայուն օղակներից մեկը, որպեսզի առավելագույնս օգտագործի տնտեսության առկա հնարավորությունները, ապահովելով բարձր մրցունակություն ֆինանսաբանկային շուկայում, շարունակելու է մատուցել ունիվերսալ բանկային ծառայություններ:

Արդյունավետ զարգացման կարևորագույն նախապայմաններից համարելով առաջատար փորձի և նոր բանկային տեխնոլոգիաների ներդրումը՝ բանկում ընդլայնվելու է գործարկված հաճախորդների սպասարկման այնպիսի ծառայություն, ինչպիսին, օրինակ, HomeBanking համակարգն է, որը հնարավորություն է տալիս հաճախորդին բանկային ծառայությունները ստանալ առանց բանկ այցելելու: Ուսումնասիրվում և ներդրվում են ինտերնետային տեխնոլոգիաներ, հաշվի առնելով ռիսկայնությունը և ներդրման առկա հնարավորությունները:

Ընդլայնվելու են վճարահաշվարկային նոր ծառայությունների մատուցումը, պլաստիկ /ինչպես տեղական, այնպես էլ միջազգային/ քարտերով սպասարկումը, կոմունալ վճարումների ընդունումը և այլն: Բանկը նախատեսում է թողարկել «MasterCard Platinum» քարտեր, միջազգային ավիաընկերություններից մեկի հետ համատեղ թողարկել

«MasterCard» կամ «VISA» կանխավճարային քարտեր, որոնց միջոցով կփոխհատուցվեն ավիաչվերթների ուշացումների պատճառով ուղևորների կրած վնասները, եվրոպական պետություններում և Ռուսաստանում գեղչային ցանցեր ձևավորած կազմակերպությունների հետ համատեղ թողարկել «MasterCard» քարտեր, թողարկել «Pay-pass» քարտեր, թողարկել 15-ից ավելի արժույթներով Սիթիբանկի երկու տեսակի չեկեր, օգտվել Դոյչե բանկի կողմից առաջարկվող «FX4Cash» ծառայությունից, ներդնել վճարահաշվարկային համակարգերով ստացված գումարների վճարման «Շարժական վճարում» ծառայությունները, ընդլայնել ֆակտորինգային գործառնությունները, կիրառել վճարահաշվարկային համակարգերով փոխանցումների գեղչային համակարգեր և կազմակերպել ակցիաներ, բանկոմատներից նախորդ և ընթացիկ ամիսների քաղվածքների ստացման հնարավորություն ընձեռել:

Տարածքային քաղաքականության շրջանակներում կշարունակվի մասնաճյուղային ցանցի ընդլայնումը, նպատակ ունենալով ապահովել բանկի ներկայությունը հանրապետության ողջ տարածքով: Կզարգանա գործունեությունը Ռոյտերս դիվիզիոն համակարգով:

Հիմնական բացասական գործոնները, որոնք կարող են որոշակի ազդեցություն թողնել բանկի գործունեության վրա՝ քաղաքական-տնտեսական գործընթացներն են՝ երկրի տնտեսության հետագա զարգացման միտումները, պետության վարած դրամավարկային քաղաքականության հնարավոր տատանումները, հարկային քաղաքականության փոփոխությունը, որը կազդի գործարար ակտիվության վրա, ինչպես նաև օրենսդրական դաշտը՝ կապված բանկային գործունեության կարգավորման հետ:

Նշված ռիսկերը մեղմելու համար բանկը շարունակելու է վարել հավասարակշռված ներգրավումային և ներդրումային քաղաքականություն, հնարավորինս կանխատեսելով զարգացման միտումները, դիվերսիֆիկացնելով ռիսկը, ընդլայնելով ծառայությունների ցանկը, խուսափելով վարկային և ավանդային պորտֆելների կենտրոնացումներից:

Բանկի համապատասխան մասնագիտական ստորաբաժանումը մեծ ուշադրություն է դարձնում բանկային նոր ծրագրերի ներդրման, գործող ծրագրերի կատարելագործման խնդիրներին: Բանկում նոր տեխնոլոգիաների ներդրումը և զարգացումը կրում է ծրագրավորված բնույթ: Ըստ առանձին բանկային ծառայությունների ոլորտների, ուսումնասիրվում է առաջատար համաշխարհային փորձը, կատարվում է մարքեթինգային ուսումնասիրություն դրա նկատմամբ, ապահովվում է ծառայությունների և տեխնոլոգիաների ներդրման հստակ ընթացակարգերի մշակումը՝ իրականացնելով նաև ներդրման փորձաքննություն:

Բանկում մշտական աշխատանքներ են ծավալվում նոր ծառայությունների, սպասարկման որակի բարելավման ուղղությամբ, հաշվի առնելով հաճախորդների հարցումների արդյունքները: